Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ-2022
10-րդ դասարան

№ 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 X 4 = 2 միավոր)

1. Ե՞րբ է գումարվել Դվինի առաջին ժողովը. *(0,5 միավոր)*

1) 491 թ.
2) 501 թ.
3) 506 թ.
4) 515 թ.

2. Ե՞րբ է Սմբատ Արծրունին Աղթամարում հանդիսավորությանբ օծվել Հայոց թագավոր. *(0,5 միավոր)*

1) 1446 թ.
2) 1465 թ.
3) 1471 թ.
4) 1478 թ.

3. Ո՞ր թվականից է Անթիլիասը դարձել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նստավայր. *(0,5 միավոր)*

1) 1446 թ.
2) 1930 թ.
3) 1915 թ.
4) 1921 թ.

4. Ամենայն Հայոց ո՞ր հայրապետն է վերահաստատել Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը. *(0,5 միավոր)*

1) Գևորգ Զ. Չորեքչյան
2) Վազգեն Ա. Պալճյան
3) Գարեգին Ա. Սարգիսյան
4) Գարեգին Բ. Ներսիսյան

№ 5-8
Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1 X 4 = 4 միավոր)

5. Հայոց եկեղեցու միասնությունը պահպանելու նպատակով _____ կարողացավ 1409 թվականին Աղթամարի կաթողիկոսությունը դարձնել Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա թեմ: *(1 միավոր)*

6. Նարեկավանքը հիմնադրվել է 10-րդ դարում _____ կաթողիկոսի ժամանակ՝ Բյուզանդիայից հալածված և Հայաստան գաղթած հայ վանականների կողմից: *(1 միավոր)*

7. Հիսուս Քրիստոս ասում է. «Այս է իմ պատվերը, որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ… Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե, թե Տերն ինչ է անում, այլ ձեզ _____ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ»: *(1 միավոր)*

8. Աղոթքի խորհուրդները շատ գեղեցիկ է նկարագրել _____: Ըստ նրա՝ աղոթքի սրբությունները երեքն են՝ սրտի, լեզվի և ձեռքերի, քանզի աղոթքը նրանց միջոցով է կատարվում: *(1 միավոր)*

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 6-7 փաստից

9. ***Տեղանունը համապատասխանեցնել գավառի անվանը.*** *(1 միավոր)*

1) Տարոն	ա) Երիզա	1
2) Արտազ	բ) Գլաձոր	2
3) Շիրակ	գ) Շահապիվան	3
4) Եկեղյաց գավառ	դ) Աշտիշատ	4
5) Բագրևանդ	ե) Բագավան	5
6) Վայոց ձոր	զ) Արգինա	6
	է) Ավարայր	

10. Կազմել համապատասխան զույգեր. *(1 միավոր)*

1) Սանատրուկ	ա) Շուշանիկ	1
2) Տրդատ Գ. Մեծ	բ) Խոսրովիդուխտ	2
3) Սուրեն Սալահունի	գ) Բյուրեղ	3
4) Գագիկ Ա. Բագրատունի	դ) Սիրանույշ	4
5) Կոնստանտինոս	ե) Խոսրովանույշ	5
6) Հերակլ	զ) Ոգուհի	6
7) Վարդան Մամիկոնյան	է) Կատրամիդե	7
	ը) Հեղինե	

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք

11. Կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման հաջորդականության.

(1 միավոր)

ա) Եղիազար Ա. Այնթապցի
բ) Աբրահամ Գ. Կրետացի
գ) Նահապետ Ա. Եդեսացի
դ) Հակոբ Դ. Ջուղայեցի
ե) Աղեքսանդր Ա. Ջուղայեցի
զ) Ղուկաս Ա. Կարնեցի
է) Սիմեոն Ա. Երևանցի

1	
2	
3	
4	
5	
6	
7	

№ 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով.

12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: *(2 միավոր)*

«Ճշմարիտ մարդը չի հաճոյանում ուրիշներին, արդարադատ է, արժանիքներ և փառք ու պատիվ չի յուրացնում, չի քամահրում տնանկին և չքավորին, պատասխանների մեջ շողոքորթ չէ, դատողության մեջ ճշմարիտ է, գործի մեջ՝ ջանադիր, միաբանության մեջ միշտ բարեզարդ է, նենգություն չի ճանաչում, կեղծավորություն չի սիրում, զարդարված է բարի գործերով և ղեկավարվում է միայն առաքինությամբ... »:

1. Քրիստոնեական եկեղեցու ո՞ր նշանավոր ներկայացուցչի խոսքերն են մեջբերված:

(1 միավոր)

_____

2. Հեղինակի ո՞ր ստեղծագործությունից է կատարված մեջբերումը: *(1 միավոր)*

_____

13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցին:

« ...Հաւատամք եւ ի մի միայն յԸնդհանրական եւ յԱռաքելական Սուրբ Եկեղեցի,
ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց,
ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց,
յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս»:

1. Որտեղի՞ց է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ

14. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին: *(0,5 x 2 = 1 միավոր)*

14.1. Եզնիկ Կողբացի, Կորյուն, Ղևոնդ, Եղիշե, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Ղազար Փարպեցի, Գյուտ Ա. Արահեզացի, Ներսես Լամբրոնացի: *(0,5 միավոր)*

14.2. Փառեն Ա. Աշտիշատցի, Շահակ (Հուսիկ) Ա. Մանազկերտցի, Սահակ Ա. Պարթև, Հովհաննես Ա. Մանդակունի: *(0,5 միավոր)*

---

15. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 x 3=3 միավոր)*

15.1. *(1 միավոր)*

ա. Արթիկի, Սյունյաց, Կոտայքի թեմեր,
բ. Արթիկի, Արմավիրի, Կոտայքի թեմեր,
գ. Շիրակի, Սյունյաց, Տավուշի թեմեր:

15.2. *(1 միավոր)*

ա. Ծաղկազարդ, Բուն Բարեկենդան, Համբարձման տոն,
բ. Տյառնընդառաջ, Բուն Բարեկենդան, Համբարձման տոն,
գ. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոն (Խաղողօրհնեք), Համբարձման տոն, Ծաղկազարդ:

15.3. *(1 միավոր)*

ա. Գրիգոր Գ. Պահլավունի, Ներսես Դ. Շնորհալի, Գրիգոր Զ. Ապիրատ, Կոստանդին Ա. Բարձրբերդցի,
բ. Գրիգոր Բ. Վկայասեր, Գրիգոր Գ. Պահլավունի, Ներսես Դ. Շնորհալի, Գրիգոր Զ. Ապիրատ
գ. Ստեփանոս Դ. Հռոմկլայեցի, Գրիգոր Բ. Վկայասեր, Գրիգոր Գ. Պահլավունի, Գրիգոր Զ. Ապիրատ:

№ 16

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից (8 x 0,25 = 2 միավոր)

16. *ա. Հայոց ո՞ր կաթողիկոսներն են պատկերված:*
բ. Ե՞րբ են գահակալել:

1.

2.

3.

4.

1. ա_____ բ_____

2. ա_____ բ_____

3. ա_____ բ_____

4. ա_____ բ_____

№ 17

Շարադրանք (2 միավոր)

1. Ներկայացրե՛ք Վաչագան III Բարեպաշտ թագավորի գործունեությունը:
2. Թվարկե՛ք ՀՀ տարածքում գործող Հայոց եկեղեցու թեմերի առաջնորդանիստ եկեղեցիները: Ձեր թեմի տարածքում պատմաճարտարապետական ի՞նչ նշանավոր հուշարձաններ գիտեք:
3. Ովքե՞ր էին Վարդանանք: Ներկայացրե՛ք Ավարայրի խորհուրդն ու Ս. Վարդանանց տոնը:
4. Ներկայացրեք եկեղեցի-պետություն «դաշնագիրը» (1920 թ. փետրվար):